

ԵՊՀ ԻՄ ԻՏՄԱՆԱՄԱՐԿԱՆ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019-2020 ՈՒՍՈՒՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈՒՍՈՒՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ ԻՄ ՈՒՍՈՒՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2019-2020 ՈՒՍՈՒՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ԻՐ գործունեությունը իրականացրել է ըստ աշխատանքային պլանի, որը բխում է ԵՊՀ ԻՄ-ի 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագրից և միտված է ռազմավարական ծրագրով նախատեսված համապատասխան նպատակների և խնդիրների իրականացմանը, ինչպես նաև ուսումնական գործընթացները կազմակերպել, վերահսկել է հիմք ընդունելով ԵՊՀ-ի կողմից հաստատված կանոնակարգերը՝ «Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ», «Երևանի պետական համալսարանում բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգ», «Երևանի պետական համալսարանի ուսանողների պրակտիկայի կազմակերպման և անցկացման կարգ»:

Հաշվետու ուստարում «Որակյալ կրթություն» ապահովելու նպատակով սահմանված ժամկետում վարչության կողմից ըստ կրթական ծրագրերի չափորոշիչների ստուգվել են 9 կրթական ծրագրեր, դեռևս ընթացքի մեջ են գտնվում Ֆինանսներ և Դեկորատիվ- կիրառական արվեստ կրթական ծրագրերի ստուգման աշխատանքները:




Ուսանողների տեղեկացվածությունը ապահովելու նպատակով ընթացքի մեջ է առկա և հեռակա ուսուցման համակարգերի բակալավրի կրթական ծրագրով սովորող ուսանողների 2020-2024թթ. և 2020-2025թթ. համար նախատեսված «Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք» տեղեկատվական ձեռնարկները:

Հետազոտական բաղադրիչները ներդնելու նպատակով ծավալուն աշխատանք է կատարվում ուսումնական գործընթացի կազմակերպման և վերահսկման կատարելագործման ուղղությամբ. ֆակուլտետների և մասնագիտական ամբիոնների հետ համատեղ «SuperVision YSU» համակարգի միջոցով կազմվում են ըստ ուսումնական տարիների (2017թ. սկսած) ուսումնական պլանները, աշխատանքային ուսումնական պլանները, ամբիոնների ժամերի հաշվարկները, դասախոսների ուսումնական բեռնվածությունները, ըստ ֆակուլտետների դասատախտակների համապատասխանությունը, ժամավճարային հիմունքներով դասավանդող դասախոսների ժամերի հաշվարկները, առարկայական մուտքերի կատարողականի հաշվարկները:

Կազմվել են քննաշրջանի ամենօրյա ժամանակացույցեր: 2019-2020թթ. ուստարվա առաջին կիսամյակում ընթացիկ և եզրափակիչ քննությունները իրականացվել են տեսախցիկներով վերազինված 4 լսարաններում, իսկ երկրորդ կիսամյակում, ելնելով երկրում ստեղծված արտակարգ իրավիճակից (համաճարակ covid-19), և՛ դասապրոցեսը, և՛ քննաշրջանը ապրիլի 1-ից իրականացվել և իրականացվում է


առցանց ZOOM ծրագրով: Դասապրոցեսի և քննաշրջանի ամբողջ ընթացքը վերահսկվել և վերահսկվում է վարչության կողմից:

Շարունակվել են ուսանողական շարժի հաշվարկման և վերահսկման գործընթացները: Աշխատանքներ են տարվել սովորողների՝ ՀՀ զինված ուժերում ծառայելու, ազատման, տեղափոխման, վերականգնման, հիվանդությունների պատճառով տարկետման, ինչպես նաև ուսումնական գործընթացին առնչվող այլ հրամանների ուղղությամբ:



Միջոցներ են ձեռնարկվել ուսումնական գործընթացին վերաբերող ավտոմատացված գործառնությունները կատարելագործելու ուղղությամբ, օրինակ՝ ընթացիկ հրամանների, ինչպես նաև քննաշրջանից ու լուծարքային շրջանից հետո առարկայական պարտք ունեցող ուսանողների անվանական ցուցակների ամփոփման գործընթացների համար:

«SuperVision YSU» ծրագրի միջոցով ավտոմատացված եղանակով շարունակվել է մինչև 12 կրեդիտ առարկայական պարտքերի վերահանձնման գործընթացի դեպքում անվանական ցուցակների ամփոփումը:




Աշխատանքներ են իրականացվել իրենց ուսանողական իրավունքները վերականգնող սովորողների առարկայական տարբերությունների հաշվարկի ձևաթուղթը «SuperVision YSU» ծրագրի միջոցով ավտոմատացնելու ուղղությամբ:

Աշխատանքներ են տարվել էլեկտրոնային կառավարման «SuperVision YSU» համակարգի և ԵՊՀ-ում գործող ուսանողական էլեկտրոնային փոստերի միջոցով ուսանողների ուսումնառությանը վերաբերող անհատական տեղեկատվություններն ավտոմատ նրանց փոխանցելու ուղղությամբ: Ֆակուլտետների հետ շարունակվել են աշխատանքները քննաշրջանների ու փոխատեղման արդյունքները ուսանողների համար առավել հասանելի ու թափանցիկ դարձնելու ուղղությամբ:


2018-2019 ուստարվա արդյունքներով իրականացվել է ԵՊՀ ԻՄ ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման գործընթացը՝ առաջնորդվելով գործող կանոնակարգով: Ուսանողական նպաստների հատկացումն իրականացվել է ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցների և ԵՊՀ ԻՄ ֆինանսական միջոցների հաշվին: Մեկ ուսումնական տարվա առաջադիմության արդյունքներով պետության կողմից ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցմամբ տրամադրվել է ուսանողական նպաստ 118 ուսանողի, կատարվել է ընդհանուր 17 փոխատեղում: Կրթաթոշակ է տրամադրվել 1-ին կիսամյակում 103 ուսանողի, 2-րդ կիսամյակում՝ 136 ուսանողի:


«Կրթության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ բուհի վճարովի համակարգում սովորող ուսանողներին հատկացվել է ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցում, որից օգտվել են *սոցիալապես անապահովության համար՝ 80* ուսանող, *սահմանամերձ համայնքների համար՝ 209* ուսանող:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղն իր ֆինանսական միջոցներից 2019-2020 ուստարվա կտրվածքով ուսանողական նպաստի ձևով տրամադրել է 100% փոխհատուցում 11 ուսանողի, կատարել ուսման վարձավճարի 248 մասնակի փոխհատուցում (քառօրյա պատերազմի մասնակից 21 ուսանող, տնօրենի հայացողությամբ 100 ուսանող):




Հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպվել և իրականացվել են մանկավարժի որակավորման լրացուցիչ դասընթացներ՝ 5 կրթական ծրագրերով (Պատմություն, Անգլերեն լեզու և գրականություն, Ֆրանսերեն լեզու և գրականություն, Հայոց լեզու և գրականություն, Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա), որոնց մասնակցում է ԵՊՀ ԻՄ 101 ուսանող (II կուրս՝ 24 ուսանող, III կուրս՝ 45 ուսանող, IV կուրս՝ 32 ուսանող):






ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում կրթության որակի բարելավմանն ուղղված գործընթացներից են դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողների կիսամյակային հարցումները (ամփոփված են I կիսամյակի հարցումների արդյունքները, II կիսամյակի հարցումները դեռևս ընթացքի մեջ են), ինչպես նաև ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների ամենամյա հարցումները: Թե՛ առկա, թե՛ հեռակա ուսուցման համակարգերում հարցումներն իրականացվում են առցանց եղանակով:


Հաշվետու ուստարվա I կիսամյակի հարցումներին մասնակցել են մասնաճյուղի՝ առկա ուսուցման 265 ուսանողներ (ուսանողական հիմնական համակազմի 49.91 %-ը), հեռակա ուսուցման 22 ուսանողներ (ուսանողական հիմնական համակազմի 2.97 %-ը): Հարցման արդյունքների ամփոփմամբ դեկան և դեկանի տեղակալ ամենաբարձր ցուցանիշն առկա ուսուցման համակարգում ունի Կիրառական արվեստի ֆակուլտետը, իսկ դեկանատի աշխատակիցների ցուցանիշով՝ Տնտեսագիտական ֆակուլտետը:




Առկա ուսուցում



Հեռակա ուսուցում




Առկա ուսուցում




Հեռակա ուսուցում

Ըստ ամբիոնների՝ առկա ուսուցման համակարգում ամենաբարձր ցուցանիշն ունի Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնը, իսկ ամենացածր ցուցանիշը՝ Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնը:



Ֆակուլտետների ամփոփմամբ առկա ուսուցման համակարգում ամենաբարձր ցուցանիշն ունի Տնտեսագիտության ֆակուլտետը, իսկ ամենացածրը՝ Բնական գիտությունների ֆակուլտետը:

2019-2020 ուստարի I կիսամյակ




Հարցման արդյունքները տրամադրվել են ամբիոններին քննարկելու և հաշվի առնելու 2020-2021 ուստարվա անհատական բեռնվածությունները կազմելիս:

2019-2020 ուստարվա առկա և հեռակա ուսուցմամբ ամփոփիչ ատեստավորումը մասնաճյուղում իրականացվում է հաստատված գրաֆիկի համաձայն սույն թվականի մայիսի 16-ից մինչև հունիսի 30-ը:

2019-2020 ուստարում առկա ուսուցմամբ մասնաճյուղն ունեցել է 166 շրջանավարտ, այդ թվում 1-ը՝ 2018թ.-ից: Շրջանավարտներից 40-ը սովորել են անվճար, իսկ 125-ը՝ վճարովի կարգավիճակով: 2019-2020 ուստարում հեռակա ուսուցմամբ կավարտեն 185 ուսանողներ:

2019-2020 ուստարվա ԵՊՀ ԻՄ շրջանավարտներ



Գերազանցության դիպլոմ ստացել են առկա ուսուցման 26 շրջանավարտներ, իսկ հեռակա ուսուցմամբ չկան հավակնորդներ:


Առաջին փուլով ԵՊՀ-ի մագիստրատուրայում ուսումնառությունը շարունակելու համար նախնական հայտ են ներկայացրել 13 շրջանավարտներ:

Հաշվետու ուստարում ևս ՀՀ ազգային վիճակագրական ծառայության Տավուշի մարզային գործակալությանն են ներկայացվել 3-ԳՄ ձևաչափերով հաշվետվությունները, որոնք ներառում են ուսանողների և շրջանավարտների վերաբերյալ տվյալներ, ինչպես նաև ԵՊՀ ԻՄ պրոֆեսորադասախոսական կազմին առնչվող տեղեկատվություն: Մշակվել և ԵՊՀ ԻՄ հաշվապահություն է ներկայացվել ուսանողական համակազմի վերաբերյալ տեղեկատվություն եռամսյակային հաշվետվությամբ: Ուսանողների առաջադիմության վերաբերյալ տվյալները ըստ ուսուցման ձևերի՝ անվճար, վճարովի, ընդհանուր (ձև 34) և (ձև 10) ամփոփվել և ներկայացվել է ԵՊՀ:

ՀՀ պաշտպանության նախարարության հետ համագործակցության շրջանակներում 2019/2020 ուստարում մասնաճյուղի 5 ուսանողներ սովորում են «Պատիվ ունեմ» ծրագրի շրջանակում: Նրանք մինչև ուսումնառության ավարտը կօգտվեն տարկետման իրավունքից և համալսարանն ավարտելուց հետո պայմանագրային աշխատանքի կանցնեն ՀՀ զինված ուժերում:

Վարչության կողմից պատրաստվել և Լիցենզավորման վարչություն է ներկայացվել «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրով հեռակա ուսուցման մագիստրատուրայի լիցենզավորման փաթեթ: Լիցենզավորման վարչության կողմից մասնաճյուղում անցկացված ստուգումների արդյունքում ձեռք է բերվել վերոնշյալ կրթական ծրագրով կրթություն իրականացնելու թույլտվություն:

2019-2020 ուստարվա աշխատանքային ուսումնական պլանի համաձայն մասնաճյուղի ուսումնական գործընթացն ընդգրկել է 28 պրակտիկաներ (այդ թվում 8-ը առաջին կիսամյակ, 20-ը՝ երկրորդ): Պրակտիկաները կազմակերպվել են ըստ ժամանակացույցի: Ապրիլի 13-ից սկսած գործընթացն իրականացվել է առցանց: Մինչև հաշվետու ժամանակաշրջանը իրականացվել է 19 պրակտիկա: Թվով 9 պրակտիկաներ իրականացվելու են հունիս-հուլիս ամիսներին:




2019-2020 ուստարվա ընթացքում մասնաճյուղը պետական և ոչ պետական տարբեր կազմակերպությունների, հիմնարկ-ձեռնարկությունների հետ ունեցել է «Ուսանողների պրակտիկայի կազմակերպման մասին» 35 պայմանագրեր, որոնցից


երեքը ձեռք են բերվել ուստարվա ընթացքում: Մանկավարժական պրակտիկաների համար պայմանագրեր են կնքվել Իջևանի Ս.Սարգսյանի անվան թիվ 1 հիմնական դպրոցի և Իջևանի Մ.Մարտիրոսյանի անվան թիվ 5 հիմնական դպրոցի տնօրենների հետ, արտադրական պրակտիկայի համար՝ «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» Փակ Բաժնետիրական Ընկերության հետ:

Մինչհամալսարանական կրթության և պրակտիկայի կազմակերպման բաժինը հանրակրթական դպրոցների հետ նախատեսված հանդիպումները կազմակերպել է միայն առաջին կիսամյակի ընթացքում՝ պայմանավորված երկրում ստեղծված արտակարգ իրավիճակից: 2019թ. հոկտեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի 6-ը հանդիպումներն իրականացվել են Տավուշի մարզի (Բերդի, Նոյեմբերյանի, Դիլիջանի և Իջևանի տարածաշրջաններ) 57 հանրակրթական դպրոցներից 41-ում: Հանդիպումների ժամանակ դպրոցներին տրվել են մասնաճյուղի գործունեության մասին տեղեկատվություն հաղորդող գովազդային պաստառներ (բաժնի կողմից պատրաստվել և տպագրության է տրվել A 3 ձևաչափ՝ 5 հատ, A 4 ձևաչափ՝ 55 հատ, A 5 ձևաչափ՝ 55 հատ գովազդային պաստառ), աշակերտներին տրամադրվել՝ 2020/2021 ուստարվա ընդունելության ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի մասնագիտությունների և ընդունելության քննությունների ցանկը:

Հանրակրթական դպրոցներում իրականացվող աշխատանքների ընթացքում կատարվել է 2020/2021 ուստարվա դիմորդների կողմնորոշվածության վերաբերյալ նախնական տեղեկությունների հավաքագրում: Տվյալների ամփոփմամբ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ դիմելու տրամադրվածություն ցուցաբերել է 227 աշակերտ:



Ըստ մասնագիտությունների



2019-2020թթ. մասնագիտական կողմնորոշման աշխատանքներ իրականացնելու նպատակով համագործակցության հուշագիր է ստորագրվել Իջևանի թիվ 5 հիմնական դպրոցի և “Save the Children” («Մեյվ դը չիլդրեն») կազմակերպության միջև (14.10.2019թ.): Համաձայն դրա իրականացվել է մեկ հանդիպում:

2020թ. ԵՊՀ օլիպիադաները, որոնք նախապատրաստվում էին իրականացվելու մարտի 28-ից ապրիլի 18-ը, դադարեցվել են արտակարգ իրավիճակի պատճառով:

ՈՒՄՎ-ն յուրաքանչյուր ամսվա ավարտին ամփոփում է իր կատարած մեկամյա աշխատանքները, որոնք արձանագրված են վարչության նիստերում:

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ Ա. ԴԱՎԹՅԱՆ